Հ. Մ. ՋԱՆՓՈԼԱԴՅԱՆ

ԴՎԻՆԻՑ ԵՎ ԱՆԻՑ ՀԱՅՏՆԱՐԵՐՎԱԾ ԶՎԱՃԵՎ ԱՆՈԹՆԵՐԸ

Հայկական միջնադարյան Դվին և Անի քաղաքների պեղումների ընթացքում, տարբեր կենցաղային իրերի կողքին հաճախ հանդիպում են նաև կավե հաստ պատեր ունեցող փոքրիկ, կլոր փորով, սրացող ներքնամասով անոթներ։

Անսովոր ձև ունեցող այս անոթների հիշատակությանը հաճախ կարելի է հանդիպել հնագիտական գրականության էջերում, ուր դրանք կոչվում են «սնդկամաններ», «սֆերոկոնիկ» կամ «ձվաձև» ու այլ անուններով։

Ինչպես կտեսնենք հետագայում, այս անուններից ոչ մեկը լրիվ չի արտահայտում ոչ դրանց ձևը, ոչ էլ նշանակությունը։ Սակայն հետևելով արդեն ընդունված սովորույթին, մենք էլ կօգտագործենք «ձվաձև անոթներ» տերմինը։

Բնորոշ ձև և խեցի ունեցող այս անոթները լավ ծանոթ են միջնադարյան քաղաքները պեղող հնագետներին։ Դրանք հանդիպում են բավական ընդարձակ տարածքում՝ Եգիպտոս, Միջագետք, Միջերկրական ծովի արևելյան ափի երկրներ, Հունաստան, Փոքր Ասիա, Արևելյան Եվրոպա, Հյուսիսային Կովկաս և Անդրկովկաս, Իրան, Միջին Ասիա։ Այս անոթների ձևի հիմնական և բնորոշ հատկանիշը դրանց կիսագնդաձև մասն է և սրացող-կոնաձև ներքնամասը, իրենց բազմապիսի տարատեսակներով՝ երկարավուն հատակով, ուռուցիկ, ներս ընկած կամ բազմանիստ կողերով, երկարավուն պարանոցով և կամ հարթ հատակով (տախտակ I, II)։

Անկախ անոթի արտաքին տեսքից, բոլոր տարատեսակներում գոգակոնաձև ներքին կտրվածքը միշտ պահպանվում է անխախտ (տախտակ III)։

Զվաձև անոթների ավելի կայուն և բնորոշ հատկանիշը բերանի վերին մասն է, որը նեղանալով վեր է ածվում փոքր անցքի, եզերված կիսագնդաձև շուրթերով։ Նեղ (3—8 մմ) բերանը շատ հարմար է ամուր խցանման համար, ըստ որում խցանը կարելի է հատուկ ձևով ամրացնել անոթի շուրթի ներքին ակոսին։

Անոթները պատրաստված են մանրահատիկ շաղախ ունեցող հրակայուն, անջրաթափանց կավից։ Խեցին իր խտությամբ և ամրությամբ նման է «քարե խեցու»։ Պատերի արտակարգ հաստության շնորհիվ անոթներն ունեն ծանր քաշ և փոքր տարողություն։

Շաղախի բաղադրությունից, կավի որակից, թրծման ջերմաստիճանից և այլ, երբեմն պատահական պատճառներից է կախված նաև անոթի խեցու գույնը, որը տարբեր վայրերում տարբեր է՝ գորշ, կարմրավուն, դեղնավուն և վերջիններիս այլազան երանգներով։

Այս հանգամանքները երբեմն հատկանշական են ձվաձև անոթների ծագումը և տեղական առանձնահատկությունները պարզելու համար։

Զվաձև անոթները պատրաստվում էին դուրգի վրա, հատուկ ձևով։ Անոթներն ավելի անթափանց դարձնելու համար ներսից ծածկում էին անգորի բարակ շերտով։

Հատուկ ուշադրության առարկա էր այս անոթների արտաքինը։ Այն մշակվում էր բազմազան միջոցներով։ Հարթեցված և հատուկ հղկված պատերը մեծ մասամբ զարդարում էին վերադիր զարդերով, դաջում տարբեր դաջաձևերով։ Զուգորդելով մեկը մյուսի հետ, զարդանկարելով տարբեր ձևերն ու տեսակները՝ մածուկով, դրվագելով նաև մանրամասները, վարպետներն ստեղծում էին բարդ և գեղեցիկ հորինվածքներ, ներդաշնակ տեսք տալով անոթներին (տախտակ II, VIII, IX)։

Անիի ժողովածուի մեջ հանդիպում են ամբողջ անոթը վերից վար դաջազարդով պատված օրինակներ։ Այլ պատկեր են ներկայացնում Դվինի ժողովածուի նմուշները։ Վերջիններս հարդարված են ավելի համեստ զարդերով, այն էլ՝ հիմնականում վերին մասում։

Անիում, թեև շատ հազվադեպ, հանդիպում են նաև գունավոր ջնարակով պատած անոթներ։

Մինչև հիմա նշված անոթների ծագման և նշանակության վերաբերյալ բոլորի կողմից ընդունված կարծիք գոյություն չունի։ Նման դեպքեր հնագիտության մեջ հազվադեպ չեն, հատկապես այն պարագայում, երբ տվյալ իրը իր բուն նշանակությունից բացի, հետագայում կենցաղում ձեռք է բերում լրացուցիչ կիրառություն։

Զվաձև անոթները հնագիտական գրականության մեջ հաճախ հիշատակվում են իբրև նման տարակարծությունների դասական օրինակներ, քանի որ նրանց կիրառության մասին գոյություն ունեն տասից ավելի կարծիքներ։ Զվաձև անոթները համարվել են լապտերներ, սրբազան անոթներ, հրձիգ նռնակներ, ճարտարապետական զարդեր, սնդիկ պահելու և տեղափո-

խելու, անուշահոտ յուղեր պահելու անոթներ, խաղալիքներ և այլն։

Այս անոթներով առաջին անգամ 1802 թ. հետաքրքրվել է ֆրանսիացի ճանապարհորդ Վիվան Դենոնը, որն իր եգիպտական ճանապարհորդական նոթերում դրում է հանդիպած ձվաձև անոթների մասին և կարծիք է հայտնում, որ այդ անոթները իրենց փոքր չափերի պատճառով լայն կիրառում չէին կարող դտնել։

XIX դ. երկրորդ կեսին Սիրիայում, Պաղեստինում և Մերձավոլգյան Բոլղար քաղաքում մեծ քանակությամբ ձվաձև անոթների հայտնադործումը հետաքրքրություն է բորբոքում դրանց նկատմամբ։ Հրապարակ են գալիս այդ անոթներին նվիրված մի շարք հոդվածներ։

Այնուհետև, ավելի ուշ, դրանցով զբաղվում են հնագետները, որոնք հնավայրերի պեղումների արդյունքներն ամփոփող հաշվետվություններում, հասարակ կավե ամաններին նվիրված բաժիններում փորձել են տալ դրանց նշանակության և կիրառման նպատակի բացատրությունը։ Գոյություն ունեցող բազմաթիվ կարծիքներն ի մի են բերված մի քանի ամփոփիչ աշխատություններում[1]։

Տարածված կարծիքներից մեկն այն է, որ ձվաձև անոթներն օգտագործվել են որպես ճրադ-կանթեղներ, որոնց մեջ վառվել է նավթ, երբեմն էլ՝ որպես մոմակալներ։ Ա. Ֆ. Լիխաչովի՝ դեռևս 1871 թ. հնագիտական համագումարում արտահայտած այս կարծիքը հետագայում ունեցել է իր բազմաթիվ կողմնակիցներն ու հետևորդները, դրանց թվում նաև այնպիսի անվանի հնագետներ, ինչպիսիք էին Ն. Ֆ. Վիսոցկին և Վ. Ա. Գորոդցովը։ Սակայն այս տեսակետը նվազ համոզիչ է։ Նախ և առաջ կրակման լինելու փաստը հերքվում է անհրաժեշտ օդանցքի բացակայության, ձևի և բերանի անհարմարության պատճառով։ Բացի այդ, նշված անոթներից ոչ մեկը չի կրում, տվյալ պարագայում անխուսափելի, կրակի հետքեր։ Այդուհանդերձ, հնարավոր է, որ դրանցից ավելի հարմար ձև ունեցողները մասնակիորեն օգտագործված լինեն տրվյալ նպատակի համար։

Առկա է մի ենթադրություն ևս, որի համաձայն, այս անոթները, հատկապես դրանց զարդարուն օրինակները, որպես ճարտարապետական հարդարանքի տարր, հատուկ երկաթե ձողերով գլխիվայր ամրացվել են ամրոցների պատերին և աշտարակներին։ Այս տեսակետը հավաստող միակ փաստն այն է, որ տվյալ անոթների մի մասը գտնվել է շենքերի ավերակների հողաթմբերում։ Այս ենթադրությունը նվազ համոզիչ է, քանի որ ոչ այդ փոքր անոթները և ոչ էլ եղած մանր զարդանկարները չէին կարող նկատելի լինել ամրոցների բարձր պատերից։

Արտահայտված կարծիքներից մեկն էլ այն է, որ այս անոթներն ունեցել են պաշտամունքային նշանակություն և օգտագործվել են անապատներում և սրբազան վայրերից ջուր տեղափոխելու համար։ Ասում են, թե այդպիսին կարող էր լինել, օրինակ, Մեքքայի «Զեմ-զեմ» սրբազան աղբյուրը։ Որպես ապացույց բերվում են, ի դեպ շատ հազվադեպ հանդիպող, ձկան ձև և հատկապես պոչ ունեցող անոթների առկայությունը, որով դրանք կապվում են ջրի պաշտամունքի հետ։ Այս տեսակետը ևս անընդունելի է, որովհետև անոթների փոքր տարողությունը և մեծ քաշը անիմաստ է դարձնում նրանց օգտագործումը անապատային երկար ճանապարհորդությունների ժամանակ։ Հայտնի է, որ Արևելքում այդ նպատակի համար օգտագործում էին ավելի թեթև, մեծ ու հարմար անոթներ։

Տարածված կարծիքներից մեկն էլ այն է, որ այս անոթները ծառայել են որպես հրձիգ նռնակներ, որոնք լցվել են դյուրավառ և թերևս պայթուցիկ նյութերով և ռազմական ամրություններից նետվել են հակառակորդի դիրքերի վրա։ Նռնակները ոչ միայն հրդեհ պետք է առաջացնեին, այլև իրենց խեցու բեկորներով վնասեին թշնամու կենդանի ուժին և խուճապի մատնեին։

Համաձայն այս տեսակի կողմնակիցների, հրձիգ նռնակները օգտագործվել են միայն պաշտպանական մարտերի ժամանակ, ինչպես արաբների, այնպես և բյուզանդացիների կողմից։ Ֆրանսիացի գիտնական Դե Սոլսիի այս կարծիքը շատ հետևորդներ է ունեցել։ Այն, սակայն, առիթ է տվել նաև բազմաթիվ բանավեճերի։ Այս կարծիքի հակառակորդները իրավացիորեն առաջ են քաշել մի քանի հակափաստ։ Դրանք են՝ անոթի խեցու հաստությունը և ամրությունը, միաձուլությունը, հրակայունությունը, որոնք շատ աննպաստ հատկություններ են հրձիգ և հատկապես պայթուցիկ նռնակների համար։ Բացի այդ անոթի նեղ և փոքր բերանը շատ անհարմար պետք է լիներ հրձիգ նյութը արագ լցնելու համար, որը մարտական պայմաններում շատ կարևոր հանգամանք է։ Բացի այդ, անոթի ձվաձևությունը և երբեմն շատ երկարացող ստորին մասն ունի բացասական բալիստիկ հատկություն. վերջապես, հրձիգ նռնակներն ինչու պետք է հարդարեին գեղեցիկ զարդերով։

Համաձայն միջնադարյան գրականության մեջ պահպանված նկարագրությունների, խաչակիրների կողմից օգտագործված հրձիգ նռնակներն ունեցել են բոլորովին այլ ձևեր։ Այս կարծիքը ժխտող լավագույն փաստն այն է, որ դրանք գտնվել են բացառապես բնակատեղերում, կենցաղային այլ և այլ իրերի համալիրում։ Ուստի պետք է կտրականապես հրաժարվել վերոհիշյալ կարծիքից։

Դժվար է համաձայնել նաև համեմատաբար նոր երևան եկած այն կարծիքների հետ (Հ. Սեյրիդ, Ջ. Ռոջերս), որոնց համաձայն ձվաձև անոթները պետք է լինեն հռոմեական ճարտարապետ Վիտրուվիոսի (I դ. ն. մ.

---

[1] Э. Ленц, նշվ. աշխ., З. Виноградов, նշվ. աշխ., Р. М. Джанполадян, նշվ. աշխ., R. Ettinghausen, նշվ. աշխ.։

թ.) նկարագրած «էոլյան անոթները», որոնք ծառայել են օջախներում կրակը բորբոքելու համար։ Սակայն ինչպես հայտնի է, Վիտրուվիոսը այլ առիթով պարզ գրել է, որ այդ նպատակով օգտագործվել են «պղնձյա» սնամեջ գնդիկներ։ Դրանք կիսով չափ լցվում էին ջրով և դրվում կրակի մեջ։ Մետաղը տաքանալով, անոթից դուրս էր վանում առաջացած գոլորշին, որը և բորբոքում էր կրակը։ Ամուր և հրակայուն խեցի ունեցող ձվաձև անոթներն այդ նպատակին բնավ չէին համապատասխանում։

Այժմ անդրադառնանք այս անոթների կիրառմանը վերաբերող ամենատարածված կարծիքին, տեսակետ, որն ի դեպ ունի նաև փաստական հիմք։ Ըստ այդ կարծիքի, քննության առարկա անոթները ծառայել են սընդիկ պահելու համար։ Այս կարծիքն այնքան է տարածված, որ երբեմն այդ հաստ պատերով փոքր անոթները պարզապես անվանում են «սնդկամաններ»։

Այս կարծիքը առաջին անգամ հայտնել է անգլիացի գիտնական Գրենվիլ Ջենստերը, Սիդոնում գտնված մի անոթի մեջ հայտնաբերելով սնդիկի մանր գնդիկներ։

Ն. Ֆ. Վիսոցկին սնդիկ պարունակող մի անոթ գտել էր Հին Ղրիմում։ Այն խցանված էր փայտե խցանով և ավելի ամուր լինելու համար պատած էր մոմով։ 1905 թ. հրապարակվում է Ի. Պոսլովսկու հոդվածը, որտեղ նկարագրված էին Թերմեզ և Օթրար կոչված վայրերում գտնված անոթները։ Այս աշխատությանը կցված էին մագիստրոս Ն. Տեխի տվյալները մի ձվաձև անոթի մեջ հայտնաբերված գորշ շագանակագույն նյութի բաղադրության վերաբերյալ, ըստ որի այն բաղկացած է եղել մոմից (գետնամոմ-օզոկերիտ) և սընդիկից։ Սնդիկի հետքեր կային նաև մի քանի այլ անոթներում (1908 թ. Մոսկվայի Կրեմլի մեծ պալատի հիմքից հայտնաբերված անոթում, Միջին Ասիայի Սոխ գյուղի մոտ գտնված երեք անոթներում)։

Այս անոթների ծագումն ու նշանակությունը պարզելու համար վերջին ժամանակներս վկայակոչվում են նոր աղբյուրներ։ Հնագետ Բ. Վ. Լունինը հրապարակել է XVI դ. պարսկալեզու բժշկաբեղագործական ձեռագրի մի էջը, որտեղ սնդիկի հատկություններին և օգտագործմանը նվիրված նկարագրությանը, որպես բացատրական նկար, կցված են երեք ձվաձև անոթներ, որոնք ըստ Բ. Վ. Լունինի սնդիկ պահելու անոթներ են։

Ազգագրական տվյալների համաձայն Փոքր Ասիայում, Պարսկաստանում և Միջին Ասիայում մինչև վերջին ժամանակներս այս տիպի անոթները հանդիպում էին կենցաղում և օգտագործվում էին բացառապես սնդիկ պարունակող լուծույթներ պահելու համար։ Այս շրջաններում ապրող պարսկալեզու բնակիչները տվյալ անոթներն անվանում են «Սիմաբ-Կուզաշե», որը բառացի թարգմանվում է «սնդիկի սափորիկ-աման»։ Միջնադարյան բանաստեղծ Խաքանի Շիրվանու մեջ հասած մի քառյակի համաձայն, այդ անոթները այդպես էին կոչվում դեռևս XII դ.։

Սնդիկը միջնադարում լայն գործածություն ուներ կենցաղում, ժողովրդական բժշկության մեջ։ Ալքիմիկոսներն այն համարում էին բոլոր մետաղների բաղադրիչ մասը։

Սնդիկը միակ հեղուկ մետաղն է և ամենածանր հեղուկը (տես. կշիռը 13,7)։ Հեշտությամբ միացություններ է տալիս ուրիշ մետաղների հետ։ Սնդիկի օգնությամբ ոսկեզօծումը որպես արտադրական պրոցես կիրառվել է դեռևս մեր թվականության առաջին դարերում։

Սնդիկի շատ միացություններ ունեն ֆիզիոլոգիական ակտիվություն, որի հետևանքով այն օգտագործվում է բժշկության մեջ, մասնավորապես մաշկի և վեներական հիվանդություններ բուժելու համար։ Միջնադարի հայ նշանավոր բժիշկ Ամիրդովլաթ Ամասիացին իր «Անդիտաց անպէտ» աշխատության մեջ բազմիցս նշում է սնդիկի և նրա օգտագործման եղանակների մասին, հիշատակելով սնդիկի 20-ից ավելի անուններ։ Միջնադարում սնդիկը հազվադեպ էր օգտագործվում մաքուր վիճակում, ավելի հաճախ գործածվում էին նրա միացությունները, որոնք բավական մեծ տարածում ունեին կենցաղի ամենատարբեր բնագավառներում (բժշկություն, մետաղագործություն, ոսկերչություն և այլն)։

Միջնադարում գիտեին սնդիկի ոչ միայն օգտակար, այլև վնասակար հատկությունների մասին։ Պատահական չէ, որ ժամանակի ալքիմիական և բժշկական աշխատություններում բազմիցս զգուշացումներ են արվում, որ սնդիկը և նրա գոլորշին կարող են առաջացնել զանազան ծանր և անբուժելի հիվանդություններ, ուստի պետք է առավել զգաստ լինել սնդիկի և նրա միացությունների, ինչպես օգտագործման, այնպես էլ պահպանման հարցերում։

Մեր կարծիքով ևս, ձվաձև անոթներն իրենց ձևով և այլ հատկություններով կարող էին շատ հարմար լինել այդ նպատակի համար։ Այդ անոթների պատրաստման և կիրառման ողջ ընթացքը ցույց է տալիս, որ դրանց ստեղծումը ոչ թե պատահականության, այլ երկարատև մտածված որոնումների արդյունք է։

Քննության առարկա անոթների ձևը այնպես է հարմարեցված, որ հեղուկը չթափվի նրա միջից, այլ հարկ եղած դեպքում հոսի բարակ շիթով, կամ կաթիլներով։ Բերանի շուրթերը հարմարեցված են ամուր, անգամ հերմետիկ խցանման համար։ Ներսի կողմից միշտ կոնաձև հատակը շատ հարմար է նյութի նըստվածքի կուտակման համար։ Նպատակահարմար են նաև խեցու ամրությունը, պատերի հաստությունը, չափերը և այլն։ Այս ամենը ցույց է տալիս, որ ձվաձև անոթները բոլոր հատկություններով պետք է որ շատ հարմար լինեին՝ թանկարժեք, բուժիչ, թունավոր, հեշտ

գոլորշիացող նյութերի, հեղուկների, դրանց թվում նաև սնդիկի և նրա այլևայլ միացությունների պահպանման համար։ Թվում է, թե ճիշտ կլիներ այդ անոթները անվանել սնդկամաններ։ Սակայն փաստերը ցույց են տալիս, որ այս անոթները օգտագործվում էին ոչ միայն սնդիկի և նրա միացությունների պահպանման համար։ Այդ կարծիքը ժխտող ամենից ծանրակշիռ փաստը այդ անոթների շատ մեծ քանակն է, որը հայտնաբերվել է միջնադարյան տարբեր երկրների հնավայրերում և պահպանվում են աշխարհի շատ թանգարաններում։ Այդպիսի քանակով սնդիկ և անգամ նրա միացությունները չէին կարող օգտագործվել ոչ կենցաղում և ոչ էլ այլ նպատակներով։ Թեև սնդիկը տարածված մետաղներից է, սակայն մաքուր վիճակում այն բնության մեջ շատ հազվադեպ է հանդիպում։ Սնդիկի ամենատարածված միացությունն է բյուրեղային ցինոբարիտը, որը նույնպես լայն օգտագործում ուներ միջնադարում։ Այն ոչ միայն որպես մաքուր սնդիկ ստանալու հումք է, այլև ինքնուրույն, որպես գեղեցիկ երանգ ունեցող կարմիր ներկ-կինովար, որը մեծ քանակով օգտագործվում էր որմնանկարչության, մանրանկարչության և այլ բնագավառներում։

Ինչպես վերը նշեցինք, ձվաձև անոթներից մեկի մեջ եղած նյութի քիմիական տարրալուծումը սնդիկի հատիկներից բացի տվել է ավելի մեծ տոկոս գետնամոմ-օզոկերիտ կոչված հանքանյութի մնացորդներ։ Այս գետնամոմը, որի մեծ պաշարները որպես հանքանյութ գոյություն ունեն Անդրկովկասում և Միջին Ասիայում, ինչպես միջնադարում, այնպես էլ մեր օրերում օգտագործվում է որպես բուժիչ դեղ մաշկային հիվանդությունների դեմ և կիրառվում է քսուքների ձևով։

Ակներևաբար իրավացի են այն ուսումնասիրողները, որոնք գտնում են, որ այս փոքր, հաստ պատերով ձվաձև անոթները օգտագործվել են ոչ միայն սնդիկը և նրա միացությունները պահպանելու համար, այլ ունեցել են ավելի լայն կիրառություն։ Օգտագործվել են կենցաղում որպես հարմար պահարան. թանկարժեք, անուշահոտ յուղեր, շուտ ցնդող հեղուկներ, վարդաջուր պահելու համար։ Ի դեպ, այս վերջինը, ինչպես հայտնի է, եղել է Հայաստանից արտահանվող արտադրանքներից մեկը։

Ինչպես պարզվում է, ձվաձև անոթները օգտագործվում էին և ալքիմիկոսների աշխատանոցներում և ծառայել են որպես հարմար ընդունիչներ նյութի թորման ժամանակ։

Ալքիմիական ձեռագրերում հիշատակված «փիլիսոփայական կավ» հատուկ ամուր շաղախը հավանաբար օգտածործվել է հենց այս ձվաձև անոթների պատրաստման համար։

Այսպիսով, առաջին հայացքից հասարակ թվացող այս խեցանոթները չպետք է շփոթել իսկապես հասարակ խեցուց, առանց ջնարակի խոհանոցային ամանեղենի հետ և դասել նրանց շարքը։ Ինչպես ցույց են տալիս վերջին ժամանակներում պեղված մի քանի բրուտագործական արհեստանոցների նյութերը, ձվաձև անոթները պատրաստվում էին արհեստանոցներում և թրծվում էին սովորական, մեծ ջերմաստիճան տվող հնոցներում, որտեղ պատրաստվում էին ամեն տեսակի, ինչպես հասարակ, այնպես և ջնարակած ամաններ։ Այդ տիպի արհեստանոցներ են գոյություն ունեցել Բայլական (Օրեն-Կալա), Թերմեզ, Դվին, Անի, Բիլար, Բոլգար և այլ քաղաքներում։

Ձվաձև անոթների սրացող վերջավորությունը, նեղացող փոքր անցքով բերանը շատ հարմարավետ են որոշ պարագաներում, ուստի և գործածվել են ամենուրեք։ Հայաստանում ևս հնագույն ժամանակներից հանդիպում են այդ ձևի անոթներ, բայց ավելի բարակ խեցիով, որպիսիները ծանոթ էին ուրարտական Թեյշեբաինի քաղաքի բնակիչներին (նկ. 1)։

Ձվաձև խեցանոթները կարելի է պահել պառկած վիճակում։ Հեղուկը դրանցից չի թափվում։ Հավանաբար այդ անոթներն ունեցել են նաև այդ նպատակի համար հարմարեցված հատուկ պատվանդաններ (փայտից կամ կավից)։ Դրանք կարելի էր դնել ավազի մեջ, հատուկ օղակաձև բարձիկների վրա կամ թելով կախել պատից։

Մեր ուսումնասիրած ձվաձև անոթները լայն տարածում են ունեցել հատկապես IX—XIV դդ., աշխույժ և երկարատև առևտրական և մշակութային կապեր ունեցող երկրներում։ Հիշյալ հանգամանքը հաստատող լավագույն փաստ կարելի է համարել Վոլգայի ափին, Բոլգար քաղաքում գտնված ձվաձև անոթների այն խումբը, որը խիստ տարբերվում է նույն տեղում գտնված այդ տիպի մի այլ մեծ խումբ կազմող անոթներից, և ձևով, խեցու գույնով և հատկապես թրծելուց հետո քերված նշաններով հարում է Անիի նույն տիպի անոթներին (տախտ. XX)։ Այս հանգամանքը մեզ չպետք է տարօրինակ թվա, քանի որ գրավոր աղբյուրներից և հատկապես հնագիտական նյութի ուսումնասիրության հիման վրա արդեն վաղուց պարզվել է Վոլգայի ափին գտնվող Բոլգար քաղաքի հարևանությամբ հայկական առևտրական մեծ գաղութի գոյությունը, որի բնակիչները սերտ կապերի մեջ էին Անի քաղաքի բնակչության հետ։

Այսպիսով, ձվաձև անոթները որոշ դեպքում կարող են նյութ ծառայել նաև առևտրական կապերի պարզաբանման համար։

Ձվաձև անոթների կիրառական բնույթը որոշելու համար պակաս նշանակություն չունեն նրանց հայտնաբերման վայրերը։ Դրանք հիմնականում գտնված են կենցաղային իրերի հետ և կենցաղի հետ կապված տեղերում՝ բնակարաններում, բաղնիքներում, բրուտի արհեստանոցում, դարբնոցում, մետաղամշակման արհեստանոցում, և այլուր։

Ձվաձև անոթների կիրառական դերն ու նշանակությունը հարկ համարեցինք պարզաբանել, որքանով մեր նպատակն է ուսումնասիրել և հրապարակել Հայաստանի միջնադարյան երկու քաղաքների՝ Դվինի և Անիի պեղումներից հայտնաբերված ձվաձև անոթները։

Դվինի պեղումների ժամանակ հայտնաբերվել են մեծ թվով ձվաձև անոթներ, որոնք ամբողջական և բեկորներով մոտ 450 օրինակ են։ Այս իրերը պահվում են Երևանում՝ Հայաստանի պատմության պետական թանգարանում։

Դրանք հիմնականում գտնվել են բնակելի շենքերում, կենցաղային զանազան իրեր պարունակող հորերում, կան նաև պատահական գյուտեր։

Անի քաղաքում նույնպես հայտնաբերվել են մեծ քանակությամբ ձվաձև անոթներ, ըստ Ն. Յա. Մառի տվյալների 600-ից ավելի նմուշներ (ամբողջական և բեկորներ)։ Դրանցից, ցավոք, պահպանվել են միայն 13 ամբողջական նմուշ և 37 բեկոր, որոնք նույնպես պահվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում։

Այս երկու հայկական քաղաքներում գտնված անոթները տարբերվում են իրարից խեցու գույնով, ձևերի մանրամասներով, զարդարման տեխնիկայով և այլ առանձնահատկություններով։

Դվինի անոթները հիմնականում ունեն գորշ-մոխրագույն խեցի (61 %)։ Քանակային առումով հետևյալ խումբը կազմում են դեղնականաչավուն երանգ ունեցող անոթները (20 %), դրանց զիջում են սև գույնի խեցի ունեցող անոթները (10 %)։ Ավելի փոքրաթիվ են շագանակագույն խեցի ունեցողները (7%), վերջապես հազվագյուտ են կարմիր գույնի խեցի ունեցողները (2%)։ Ձվաձև անոթները գտնվում են XI—XIV դարերի համարյա բոլոր տեղամասերում և պատկանում են կենցաղային ամենամասսայական իրերի թվին։

Անիում մի խումբ ձվաձև անոթներ հայտնաբերվել են միջնաբերդում, դեպի ամրոցը տանող ջրամատակարարման ուղու շրջակայքում և թվագրվում են X—XI դդ.։ Մյուս մասը, որը գտնվել է քաղաքի կենտրոնական փողոցի շուրջը տեղավորված բնակարաններում, խանապարում, բաղնիքում, վերաբերում է XII, XIII դդ.։

Դվինի ժողովածուում ձվաձև անոթները ներկայացված են իրենց ձևերի տարատեսակներով (տախտ. I)։ Միխումբ հարդարված է վերադիր դաջազարդ զարդերով, շատ չափավոր, գլխավորապես անոթի վերին և միջին մասերում (տախտ. II—V)։ Ձվաձև անոթների մեծագույն մասն ունի հարթ, անզարդ պատեր, ոչ մեծ չափեր։ Ամենատարածված չափն է 9—12 սմ, որոնց տարողությունը տատանվում է 200 խոր. սմ. մինչև 350 խոր. սմ։ Ինչպես ցույց է տալիս համեմատական աղյուսակը, անոթի արտաքին չափերը միշտ չէ, որ համապատասխանում են նրա տարողությանը։ Տարբեր է նաև անոթների քաշը։ Անիի ձվաձև անոթներն ունեն ավելի մեծ չափեր և տարողություն (մեծերից մեկի չափերն են 19,5×12,5 սմ, տարողությունը 2100 խոր. սմ)։ Զարդարված են ավելի շքեղ։ Որոշ օրինակներ դաջազարդված են վերից վար և առավել շքեղ տեսք տալու համար, որոշ զարդեր ընդելուզված են գունավոր՝ կարմիր, կանաչ ջնարակով։

Թե՛ Դվինի և թե՛ Անիի զարդանկարված անոթներից հանված դաջերի աղյուսակը ցույց է տալիս միջնադարյան խեցեգործ վարպետների ունեցած լայն հնարավորությունները անոթների վրա բազմապիսի հորինվածքներ ստեղծելու գործում (տախտ. V—VIII)։

Իրենց ոճով Անիի և Դվինի դաջազարդերը և նրանցով կազմված հորինվածքները հիշեցնում են հայ արծաթագործ վարպետների աշխատանքները։

Անիի ձվաձև անոթներից մի քանիսը պատած են կապույտ (նկ. 13) և կանաչ ջնարակով։

Անիի ձվաձև անոթները իրենց ոճով կարելի է բաժանել երկու խմբի. մի խումբը հարուստ է դաջազարդով և ավելի մեծ չափերի է, քան մյուսը, որը զուսպ է իր զարդարման ոճով։ Վերադիր կամ դաջազարդով մշակված է այդ անոթների միայն վերին կեսը։ Առաջին իսկ հայացքից նկատելի է, որ այդ անոթները պատրաստված են տարբեր արհեստանոցներում։ Սակայն այս ոճական տարբերությունը չի անշատվում, ժամանակագրական բնույթ չի կրում, թե՛ մեկ և թե՛ մյուս ոճի անոթներ հանդիպում են ինչպես միջնաբերդում (X—XI դդ.), այնպես էլ բուն փողոցին կից բնակարաններում (XII—XIII դդ.)։

Այստեղից ինքնին բխում է այն հետևությունը, որ Անիում միաժամանակ և երկար տևողությամբ գոյություն են ունեցել երկու ինքնուրույն խեցեգործական արհեստանոցներ, որոնք մեկը մյուսից անկախ արտադրել են տարբեր ոճի զարդեր ունեցող ձվաձև անոթներ։

Դվինի ժողովածուն մեզ հնարավորություն է տալիս զատելու IX դ. պատկանող անոթների խումբը։ Այս խմբի անոթները պատրաստված են սովորականից ավելի գորշ կավից, ունեն ավելի փոքր չափեր, կլորացող պատեր և շատ հազվադեպ են զարդարվել (նկար 44—45)։

Դվինի ձվաձև անոթների ժողովածուում առանձնահատուկ ուշադրություն են գրավում երկու դեղնավուն խեցի ունեցող անոթները (նկ. 39, 40), որոնք զարդարված են շրջանաձև, երեք անգամ կրկնվող, մեկը մյուսին հյուսված զույգ օձերի վերադիր պատկերով։ Այս երկու անոթները, որոնցից մեկը գտնված է 1939, իսկ մյուսը՝ 1949 թ., շատ նման են իրար, ոչ միայն իրենց դեղնավուն խեցիով, գեղեցիկ համաչափ ձվաձևով, այլև զարդարանքի ընդհանուր հորինվածքով ու մանրամասներով։ Այս անոթները թվագրվում են XII դարով։ Շատ հնարավոր է, որ դրանք պատրաստվել են ոչ միայն նույն արհեստանոցում, այլև միևնույն

վարպետի ձեռքով, սակայն պատկանել են տարբեր անձնավորություններին։

Հայտնի են այս տիպի՝ զույգ հյուսված օձերի բարձրադիր պատկեր ունեցող ձվաձև անոթների ևս մի քանի օրինակներ, որոնք գտնվում են տարբեր թանգարաններում։

Մի այդպիսի անոթ պահվում է Մոսկվայի պատմության թանգարանում (նկ. 58)։ Վերջինիս ծագումն անհայտ է։ Նույն տիպի զույգ օձերի բարձրադիր պատկերով մի այլ անոթ, նույնպես անհայտ ծագումով, գտնվում է Վաշինգտոնում, մասնավոր ժողովածուում (նկ. 56)։ Երեք այս տիպի անոթներ գտնվում են Երուսաղեմի թանգարանում։ Համանման մի այլ անոթ, որի վրա զույգ հյուսված օձերի պատկերը կրկնվում է արդեն վեց անգամ, դնել է հնագետ Ջ. Ռոջերսը Թեհրանում, կրկին անհայտ ծագումով։ Նշված անոթների մի քանի այլ մանրամասներ ևս վկայում են, որ դրանք պատրաստված են եղել նույն արհեստանոցում։ Դժվար է, սակայն, ասել, թե որտեղ է գտնվել այդ վարպետ բրուտի արհեստանոցը։

Բանն այն է, որ զույգ հյուսված օձերի՝ չար և բարի ոգիների խորհրդանիշը, բավական տարածված թեմա է տարբեր ժողովուրդների թե՛ բանահյուսության մեջ և թե՛ կիրառական արվեստում (տախտ. XVII)։

Հայաստանում այդ խորհրդանիշին կարելի է հանդիպել ամենուրեք՝ ինչպես ճարտարապետական մանրամասներում (տախտ. XVII b), այնպես և այլ բնագավառներում։ Այդ տարրը հատկապես տարածված է մանրանկարչության և զարդարվեստի մեջ, որտեղ կարելի է հանդիպել ոչ միայն օձերի, այլև ուրիշ կենդանիների ու թռչունների զույգ հյուսված մարմինների թեմային, որը հնարավորություն է տալիս նշմարել այն ընթացքը, որով կենդանիների իրական պատկերը վեր է ածվում զարդաձևի (տախտ. XVIII)։

Սակայն մեր ձվաձև անոթների վրա տեղավորված զույգ օձապատկերը կարելի է գիտել նաև այլ տեսանկյունից։ Ինչպես հայտնի է գալարվող օձի պատկերը դեռ հնում ունեցել է իր ուրույն իմաստը։ Այն եղել է հին հունական բժշկության աստված Ասկլեպիոս-Էսկուլապի խորհրդանիշը։ Որ Հունաստանում գիտեին օձի թույնի բուժիչ հատկությունների մասին, վկայում են օձերի այն մեծ արգելանոցները, որոնք որպես կանոն, գոյություն ունեին Ասկլեպիոս աստծու սրբավայրերում, հիվանդանոցներին կից։

Կարելի է ենթադրել, որ այդ հանգամանքը ինչ-որ չափով իր արտահայտությունն է գտել նաև մեր անոթների վրա։ Այսպիսով, օձի միանման պատկերը, կրկնված տարբեր վայրերում, մի քանի ձվաձև անոթների վրա, այս դեպքում ևս կարող էր ունենալ իր խորհուրդը. այն, որ այդ անոթներում պահվում էին նաև օձի թույն պարունակող կամ ընդհանրապես թունավոր հեղուկ, դեղ կամ քսուք։

Դվինի անոթների մեծագույն մասը և Անիի անոթների մեծ մասն ունեն մի առանձնահատկություն, որը հազվադեպ է հանդիպում ուրիշ վայրերում գտնված ձվաձև անոթների վրա։ Մեր ժողովածուների անոթներն անկախ նրանց չափից, ձևից, զարդապատկերներից ունեն թրծելուց հետո փորված նշաններ, կամ խորհրդանշաններ, երբեմն էլ արձանագրություններ կամ այլ նշաններ։

Այս նշաններն արված են թրծելուց հետո, արդեն ամուր, երբեմն նույնիսկ զարդանկարված խեցու վրա, ուստի, վարպետ-բրուտագործի նշաններ լինել չեն կարող։ Թրծելուց առաջ, վարպետի անվան արձանագրությունը հանդիպում է միայն մի դեպքում. Դվինի անոթի բեկորի վրա և կարդացվում է՝ Ֆայրուզ (նկ. 46, տախտ. XIII, 8)։

Անիի անոթների վրա եղած նշաններն ունեն մի քանի հայերեն տառեր, և ոչ բարդ խորհրդանշաններ (տախտ. XI)։

Դվինի անոթների վրա փորված նշաններն ավելի բազմազան են, ունեն բազմաթիվ կրկնություններ։

Բերված օրինակներից (տախտ. XII—XVII) ակներև է դառնում, որ անոթների վրա փորված են եղել արաբատառ արձանագրություններ և նմանեցումներ, վերջիններս հաճախ աղճատված են և վերածված ուղղակի խորհրդանշանի և այլ բազմաթիվ անբացատրելի նշանների։

Վերծանման ենթակա արաբատառ արձանագրությունները հիմնականում անձնանուններ են. Աբու-Բաքր, Ալի, Ամին, Ահմեդ, Բահրամ, Իսա, Յուսուֆ, Հասան, Մուհամմեդ, Ուբայդ, Ումար, Հուդդադ, Շիրին։ Անձնանունների, մանավանդ նշանների մի մասը կարելի է ընդունել որպես խորհրդանիշ կամ հմայիլներ։

Մի քանի նշանների մեջ կարելի է դիտել հայերեն Կ կամ Հ տառի աղճատված պատկերը։

Շատ հավանական է, որ այս նշանները պատկանելիս են եղել ձվաձև անոթի տիրոջը, որը փորագրել է կամ իր անունը, սեփական նշանը, կամ այդ նշանով արտահայտել է անոթի պարունակությունը։

Ապակեգործության զարգացման և նրա արտադրանքի մասսայական դառնալու կապակցությամբ, դեղեր և թանկարժեք յուղեր պահելու համար արդեն սկսում են ավելի հաճախ օգտագործել ապակուց պատրաստված անոթներ։ Ապակու նյութի ավելի ճկունության և պատրաստելու տեխնիկայի առանձնահատկության շնորհիվ ապակե անոթները կավե անոթների համեմատությամբ ունեն ավելի մեծ բազմազանություն (նկ. 65, 67)։ Դվինում պեղված միջնադարյան ապակիների ժողովածուում մենք ունենք մի քանի այդպիսի օրինակներ (նկ. 60, 61, 62, 63, 64)։

Ապակուց ձվաձև անոթներ պատրաստվում էին ինչպես փչելու եղանակով, այնպես էլ քարից պատրաստված հատուկ կաղապարներում (նկ. 66)։ Նմանօրինակ կաղապարներից այժմ հայտնի են մի քանիսը։ Դրանք գտնված են Փոքր Ասիայի Միլեթ քաղաքում, Սոֆիայում, Սարայ-Բերքեյում և Գուրգանում (Վրկան)։

Մանրամասն ուսումնասիրելով Դվինի և Անիի պեղումներից հայտնաբերված ձվաձև անոթների ժողովածուները և դրանք համեմատելով բազմաթիվ նույնատիպ անոթների հետ, դալիս ենք այն եզրակացության, որ այս՝ հաստ խեցի ունեցող, փոքր բերանով, սրացուլ վերջավորությամբ ձվաձև անոթները օգտագործվել են անուշահոտ յուղերի, հեշտ գոլորշիացող և թունավոր հեղուկների, զանազան դեղորայքի և քսուքների պահպանման համար։ Այդ անոթները IX—XIV դդ. լայն տարածում են ունեցել Ասիայում և Արևելյան Եվրոպայում ապրող շատ ժողովուրդների կենցաղում։